ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

2019 թվականի ներդրումային գործունեության

մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....3

ԲԱԺԻՆ 1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2019 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը.....3

ԲԱԺԻՆ 2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2019 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները.....6

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները.....6

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները.....8

ԲԱԺԻՆ 3. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2019 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները.....9

3.1.Գազափոխադրման համակարգ.....9

3.1.1. Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի ընդլայնմանն ուղղված ներդրումներ.....9

3.1.2. Գազափոխադրման համակարգի ընդլայնում.....9

3.1.3. Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ.....10

3.2. Գազաբաշխման համակարգ.....11

3.2.1. Նոր բաժանորդների միացում.....11

3.2.2. Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ.....11

ԲԱԺԻՆ 4. Իրականացված ներդրումների ազդեցությունը սպասարկման որակի ցուցանիշների վրա.....14

ԲԱԺԻՆ 5. Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը.....15

5.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը.....15

5.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը.....17

Ամփոփիչ մաս և եզրակացություններ.....18

Հղումներ օգտագործված նյութերին.....19

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2020 թվականի աշխատանքային ծրագրի 23-րդ կետի [Որոշում 1] և արտացոլում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետև նաև ընկերություն) 2019 թվականի գազի համալիրի վերականգնման և զարգացման ներդրումային ծրագրի մոնիթորինգի գնահատականը: Փաստաթուղթը ներառում է ներդրումային ծրագրի և փաստացի կատարված աշխատանքների համադրությունը, իրականացված ծախսերի արդյունավետության, ինչպես նաև՝ սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի վերլուծությունը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2019 թվականի գազի համալիրի վերականգնման և զարգացման ներդրումային ծրագիրը [Որոշումներ 2, 3] և լիցենզավորված գործունեության վերաբերյալ ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը [Հաշվետվություն], [Տեղեկատվություն]:

ԲԱԺԻՆ 1.
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2019 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2019 թվականի տարեկան ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր տարբեր միջոցառումներ իրականացնել գազափոխադրման և գազաբաշխման համակարգերում՝ դրանց վերակառուցման, վերազինման, նոր բաժանորդների միացման և այլ հիմնախնդիրների լուծման նպատակով: Ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով նախատեսվում էր նաև ներդրումներ իրականացնել տարբեր սարքավորումների, ժամանակակից տեխնիկա տեխնոլոգիաների ձեռքբերման ուղղությամբ:

Ներդրումային ծրագրով նախատեսված էր 2019 թվականի ընթացքում իրականացնել 4 302,8[1] մլն դրամի ներդրումներ, այդ թվում՝

- Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի (այսուհետ նաև ԳՍՊԿ) ընդլայնմանն ուղղված ներդրումներ՝ 120,1 մլն դրամ,
- գազափոխադրման համակարգի ընդլայնմանն ուղղված ներդրումներ՝ 1 863,7 մլն դրամ,
- գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 27,8 մլն դրամ,
- նոր բաժանորդների միացման ուղղությամբ ներդրումներ՝ 550,3 մլն դրամ,
- գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 1 740,9 մլն դրամ:

- այդ թվում՝ ազդանշանային սարքերի ինքնաշխատ վթարային կափույրների տեղակայման ուղղությամբ ներդրումներ՝ 374,9 մլն դրամ:

Ստորև՝ գրաֆիկ 1-ում, ներկայացված է ընկերության 2019 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումն ըստ նպատակային ուղղությունների:

Գրաֆիկ 1



[1]Սույն վերլուծական տեղեկանքում նշված բոլոր գումարները չեն ներառում ԱԱՀ-ն:

Աբովյանի ԳՍՊԿ-ի ընդլայնման, վերականգնման, վերակառուցման և արդիականացման նպատակով նախատեսվում էր ներդնել 120,1 մլն դրամ՝ գազահորի շինարարության, ինչպես նաև Աբովյանի ԳՍՊԿ-ի վերակառուցման և արդիականացման նպատակով: 108,5 մլն դրամը նախատեսվում էր ուղղել №23 գազահորի շինարարական աշխատանքների, ինչպես նաև №7 գազահորի վերակառուցմանը և հզորության ավելացմանն ուղղված աշխատանքների իրականացմանը, իսկ 11,6 մլն դրամը՝ գազահորերի լվացմանը, պոմպակայանի վերակառուցմանը և արդիականացմանը:

Գազափոխադրման համակարգի ընդլայնմանն ուղղված ներդրումները՝ 1 863,7 մլն դրամը, նախատեսվում էր ուղղել նոր մայրուղային գազատարների կառուցման, վնասված մայրուղային գազատարերի վերականգնման, վերատեղադրման և փոխարինման աշխատանքներին:

Ներդրումային ծրագրի ծավալի 27,8 մլն դրամը նախատեսվում էր ներդնել գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով՝ այդ թվում ժամանակակից տեխնիկա և տեխնոլոգիաներ ձեռք բերելու, ինչպես նաև շենքերի և շինությունների վերականգնման և վերակառուցման նպատակով:

550,3 մլն դրամը նախատեսված էր 11 800 նոր բաժանորդների մոտ գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի տեղադրման և նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգերը գազամատակարարման ցանցին միացման աշխատանքներ իրականացնելու նպատակով:

Գազաբաշխման համակարգում նախատեսվող ներդրումների շրջանակում նախատեսվում էր 12 800 գազասպառողների մոտ ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների ձեռքբերում և տեղադրում՝ 11 800-ը՝ նոր միացվող բաժանորդների բնակարաններում, իսկ 1000-ը դեռևս ազդանշանային սարքեր և ինքնաշխատ վթարային կափույրներ չտեղադրված, գազիֆիկացված բնակարաններում (ներկայումս «փակ դուռ» հանդիսացող բնակարաններ):

Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով ներդրումների 434,4 մլն դրամը նախատեսված է ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրման նպատակով: Այս ուղղությամբ նախատեսվում էր նաև ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով ձեռք բերել համակարգչային և կազմակերպչական տեխնիկա և գրասենյակային գույք:

ԲԱԺԻՆ 2.
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2019 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության՝ ընկերությունը 2019 թվականի ընթացքում կատարել է 4 389,9 մլն դրամի կապիտալացվող աշխատանքներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 3 727,2 մլն դրամի հիմնական միջոցներ: Մնացած 662,6 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ կամ ավարտվել են, սակայն դեռևս չեն շահագործվում:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է ընկերության կողմից 2019 թվականի ընթացքում փաստացի իրականացված՝ ավարտված և հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

հ/հ	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը	Փաստացի իրականացված՝ ավարտված ներդրումներ	Ծրագրի կատարման ցուցանիշը	Իրականացված ներդրումներ՝ այդ թվում շահագործման չհանձնված			Իրականացված ներդրումներ հանձնաժողովի հետ համաձայնեցված ծավալների շրջանակում
					2019թ.	2019թ. սկզբի դրությամբ (մնացորդ)	Ընդամենը	
		մլն դրամ	մլն դրամ	%	մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ
1	2	3	4	5	6	7	8	9
1	Գազափոխադրման համակարգի Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի ընդլայնմանն ուղղված ներդրումներ	120.1	10.2	9%	101.9	224.1	325.9	112.1

(շարունակություն)

2	Գազափոխադրման համակարգի ընդլայնմանն ուղղված ներդրումներ	1 863.7	1 671.9	90%	436.4	1 444.5	1 881.0	1 881.0
3	Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	27.8	27.8	100%	27.2	0.6	27.8	27.8
4	Նոր բաժանորդների միացմանն ուղղված ներդրումներ	550.3	513.0	93%	514.9	0.0	514.9	514.9
5	Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	1 740.9	1 504.4	86%	1 575.0	65.2	1 640.2	1 640.2
5.1	*Ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների ձեռքբերում և տեղադրում*	374.9	380.3	101%	380.3	0.0	380.3	380.3
	Ընդամենը	**4 302.8**	**3 727.2**	**87%**	**2 655.4**	**1 734.4**	**4 389.9**	**4 176.0**

Հարկ է նշել, որ ավարտված ներդրումների ծավալում Ընկերությունը ներկայացրել է Ներդրումային ծրագրով չհամաձայնեցված 120,0 մլն դրամի ներդրումներ, որոնք վերլուծության ընթացքում հաշվի չեն առնվել:

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են 2019 թվականի ընթացքում կատարված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2

№	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Իրականացված		Շահագործման հանձնված	
		մլն դրամ	%	մլն դրամ	%
1	2	3	4	5	6
1	**Նախորդ ժամանակահատվածի անավարտ աշխատանքներ**	**1 734.4**	**40%**	**1 481.6**	**40%**
2	**Կապալառու կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից**	**866.0**	**20%**	**595.8**	**16%**
3	**Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից**	**268.6**	**6%**	**268.6**	**7%**
4	**Սեփական ուժերով կատարված աշխատանքներից**	**1 520.9**	**35%**	**1 381.2**	**37%**
4.1	*աշխատանքի վճարման գծով ծախսումներ*	175.0		**174.4**	
4.2	*նյութական ծախսումներ*	685.5		**562.2**	
4.3	*տեղակայման ենթակա սարքավորումներ*	630.2		**630.2**	
4.4	*նախագծային աշխատանքներ*	29.2		**13.5**	
4.5	*այլ*	1.0		**1.0**	
	ԸՆԴԱՄԵՆԸ	**4 389.9**		**3 727.2**	

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 2-ից, ներդրումներն իրականացվել են ինչպես կողմնակի կազմակերպությունների միջոցով, այնպես էլ՝ սեփական ուժերով: Ինչպես և 2018 թվականին, 2019 թվականի ընթացքում սեփական ուժերով կատարվել է ընդհանուր ներդրումների 35%-ը:

ԲԱԺԻՆ 3.
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2019 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

3.1. Գազափոխադրման համակարգ

Ստորև, ըստ ուղղությունների, ներկայացված են ընկերության կողմից 2019 թվականի ընթացքում գազափոխադրման համակարգում իրականացված ներդրումների ծավալները:

3.1.1. Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի ընդլայնմանն ուղղված ներդրումներ

2019 թվականի ընթացքում Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի ընդլայնման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 120,1 մլն դրամ, որից 108,5 մլն դրամը №23 նոր գազահորերի շինարարության և №7 գազահորի վերակառուցման և հզորության ավելացման ուղղությամբ: Աշխատանքների իրականացման արդյունքում №7Գ գազահորի երկրաչափական ծավալը 50.0 հազար մ^3-ից նախատեսվում էր ավելացնել՝ հասցնելով շուրջ 90.0 հազար մ^3:

Հաշվի առնելով, որ երկարատև շահագործման արդյունքում ԳՍՊԿ գազահորերի լվացման պոմպերը սպառել են իրենց ծառայության ժամկետը՝ 11,6 մլն դրամ նախատեսվում էր ներդնել լվացման 2 պոմպերի փոխարինման նպատակով:

Նշված ուղղություններով փաստացի իրականացվել են 325,9 մլն դրամի աշխատանքներ, որից շահագործման են հանձնվել՝ 10,2 մլն դրամը:

3.1.2. Գազափոխադրման համակարգի ընդլայնում

Գազափոխադրման համակարգի ընդլայնման ուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 1 863,7 մլն դրամ՝ նոր մայրուղային գազատարերի կառուցման և

փոխարիման նպատակով: Փաստացի իրականացվել են 1 881,0 մլն դրամի ներդրումներ:

«Կարմիր Կամուրջ-Ալավերդի Dպ-700 գազատարի կառուցում (տեղափոխում Վրաստանի տարածքից)» ենթաուղղությամբ փաստացի իրականացվել են 1 671,9 մլն դրամի աշխատանքներ, որոնք ամբողջությամբ հանձնվել են շահագործման:

«Ղազախ-Երևան-ԳՍՊԿ գազատարի Dպ700 լուպինգի կառուցում» ենթաուղղությամբ փաստացի իրականացվել են 25,7 մլն, իսկ *«Դիլիջանի ԳԲԿ-ի Dպ150մմ կողմնատար գազատարի կառուցում»* ենթաուղղությամբ՝ 3,8 մլն դրամի դրամի ներդրումներ՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ուղղությամբ:

«Մայրուղային գազատարների փոխարինում» ենթաուղղությամբ փաստացի իրականացվել են 179,6 մլն դրամի աշխատանքներ, որոնք ուղղվել են *«Վարդենիս-Ջերմուկ Dպ300»* մայրուղային գազատարի վերականգնմանը՝ խողովակի փոխարինմամբ:

Վերոնշյալ ներդրումները դեռևս շահագործման չեն հանձնվել:

3.1.3. Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ

Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով 2019 թվականին նախատեսվում էր 27,8 մլն դրամով ձեռք բերել ժամանակակից տեխնիկա և տեխնոլոգիա, ինչպես նաև իրականացնել շենքերի և շինությունների վերականգնման և վերակառուցման աշխատանքներ, որոնք ամբողջությամբ փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել: Մասնավորապես.

«Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդնում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 4,8 մլն դրամի ներդրումներ իրականացնել: Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 7 հատ բարձր մածուցիկությամբ նյութերի մղիչ HBMp - 500m՝ ընդամենը 4,76 մլն դրամ արժեքով:

«Շենքերի և շինությունների վերականգնում և վերակառուցում» ուղղությամբ 2019 թվականին նախատեսվում էր իրականացնել 23,0 մլն դրամ ընդհանուր արժեքով 5 հատ ԳԲԿ օպերատորների աշխատասենյակների կապիտալ նորոգում: Նշված աշխատանքներն ամբողջ ծավալով իրականցվել և շահագործման են հանձնվել:

3.2. Գազաբաշխման համակարգ

Ստորև, ըստ ուղղությունների, ներկայացված է ընկերության կողմից 2019 թվականի ընթացքում գազաբաշխման համակարգում իրականացված ներդրումների ծավալները:

3.2.1. Նոր բաժանորդների միացում

Այս նպատակով 2019 թվականին նախատեսված էր 543,3 մլն դրամ 11 800 բնական գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի ձեռքբերման և տեղադրման նպատակով և 7,0 մլն դրամ նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգերը գազամատակարարման ցանցին միացման աշխատանքներ իրականացնելու նպատակով:

Փաստացի ձեռք են բերվել և տեղակայվել 11 798 գազահաշվիչներ՝ 499,8 մլն դրամ ընդհանուր արժեքով: Արդյունքում 2019 թվականի ընթացքում բնական գազի համակարգին միացել են 11 798 բաժանորդ և 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ բնական գազի մատակարարման ցանցին միացված բաժանորդների ընդհանուր թիվը կազմել է 714 164:

«Նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգերը գազամատակարարման ցանցին միացման աշխատանքներ» ենթաուղղությամբ փաստացի իրականացվել են 15,1 մլն դրամի աշխատանքներ, որից շահագործման են հանձնվել 13,2 մլն դրամ արժեքով ներդրումներ:

3.2.2. Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ

Այս նպատակով 2019 թվականին, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների, համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի ձեռքբերման, ավտոմեքենաների բնական գազով լիցքավորման վերասարքավորման, ԳԳՄ-ների համար հողատարածքների, շենքերի, շինությունների և այլ անշարժ գույքի ձեռքբերման, գազաբաշխիչ ցանցի գազատարների վերականգնման և վերակառուցման և բնական գազի հաշվառման համակարգի վերականգնման, վերակառուցման և

արդիականացման նպատակով նախատեսվում էր իրականացնել 1 740,9 մլն դրամի ներդրումներ:

«Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում» ենթաուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 435,4 մլն դրամ՝ ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների և չափիչ և հատուկ նշանակության սարքերի և գործիքների ձեռքբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել և շահագործման են հանձնվել 469,2 մլն դրամի ներդրումներ:

«Ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների ձեռքբերում և տեղադրում» ենթաուղղությամբ 2019 թվականին նախատեսվում էր 374,9 մլն դրամ ներդնել 12 800 ազդանշանային սարքեր և անջատիչ վթարային կափույրներ տեղակայելու ուղղությամբ:

Հաշվետու տարում նշված ենթաուղղությամբ 380,3 մլն դրամ ընդհանուր արժեքով տեղակայվել են 13 221 հատ սարքեր:

«Չափիչ և հատուկ նշանակության սարքերի և գործիքների ձեռքբերում» ենթաուղղությամբ 2019 թվականին նախատեսվում էր ներդնել 60,5 մլն դրամ: Հաշվետու տարում ներդրվել է 37,5 մլն դրամ՝ մթնոլորտային ճնշման և օդի ջերմաստիճանի գրանցող սարքերի, ացետիլենային գազագեներատորների, դյուրակիր քրոմատոգրաֆի, ջերմահիդրոմետրի, հաստաչափի, հողանցման դիմադրության չափիչների և այլ չափիչ և հատուկ նշանակության սարքերի և գործիքների ձեռքբերման նպատակով:

«Համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի ձեռքբերում» ուղղությամբ 2019 թվականին նախատեսվում էր ներդնել 108,6 մլն դրամ՝ համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի, գրասենյակային գույքի, սերվերների, սերվերային սարքավորումների, ծրագրային ապահովումների և արտոնագրերի ձեռքբերման նպատակով:

Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 124,2 մլն դրամ ընդհանուր արժեքով հիմնական միջոցներ:

«Համակարգչային և կազմակերպչական տեխնիկայի ձեռք բերում» ենթաուղղությամբ նախատեսվում էր ձեռք բերել 11,2 մլն դրամի հիմնական միջոցներ, որոնք ամբողջությամբ փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել:

«Գրասենյակային գույքի ձեռքբերում» ենթաուղղությամբ 2019 թվականին նախատեսվում էր ներդնել 48,0 մլն դրամ: Հաշվետու տարում ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 44,0 մլն դրամի հիմնական միջոցներ:

«Սերվերների, սերվերային սարքավորումների, ծրագրային ապահովումների և արտոնագրերի ձեռքբերում» ենթաուղղությամբ 2019 թվականին նախատեսվում էր ներդնել 49,4 մլն դրամ: Հաշվետու տարում ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 52,8 մլն դրամի հիմնական միջոցներ:

«Ավտոմեքենաների վերասարքավորում՝ բնական գազով լիցքավորման համար» ուղղությամբ 2019 թվականին նախատեսվում էր ներդնել 1,0 մլն դրամ՝ թեթև մարդատար օպերատիվ ավտոմեքենաների վերասարքավորման նպատակով: Նշված ներդրումներն իրականացվել և շահագործման են հանձնվել:

«ԳԳՄ-ների համար հողատարածքների, շենքերի, շինությունների և այլ անշարժ գույքի ձեռքբերում» ուղղությամբ 2019 թվականին նախատեսվում էր ներդնել 160,8 մլն դրամ: Հաշվետու ժամանակահատվածում ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 160,8 մլն դրամի հողամաս և վարչական շենք Մարտունի համայնքում:

«Գազաբաշխիչ ցանցի գազատարների վերականգնում և վերակառուցում» ուղղությամբ 2019 թվականին նախատեսվում էր ներդնել 794,4 մլն դրամ՝ 49,35կմ գազատարների վերականգնման և վերակառուցման նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի իրականացվել են 691,7 մլն դրամի աշխատանքներ, որից շահագործման են հանձնվել 555,8 մլն դրամ արժեքով ներդրումներ:

«ՊԳԿԿ-ների վերականգնում, վերակառուցում և արդիականացում» ուղղությամբ 2019 թվականին նախատեսվում էր ներդնել 44,6 մլն դրամ՝ 30 ՊԳԿԿ-ների վերականգնման, վերակառուցման և արդիականացման նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 44,7 մլն դրամ արժեքով ներդրումներ:

«Բնական գազի հաշվառման համակարգի վերականգնում, վերակառուցում և արդիականացում» ուղղությամբ 2019 թվականին նախատեսվում էր ներդնել 196,1 մլն դրամ՝ 620 մեմբրանային գազահաշվիչների համալրման համար ճնշման և ջերմաստիճանի էլեկտրոնային ճշտիչների և 3 էլեկտրոնային ճշտիչներով համալրված անդրաձայնային գազահաշվիչների և արկղերի ձեռքբերման և տեղադրման

նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 215,6 մլն դրամ արժեքով ներդրումներ:

ԲԱԺԻՆ 4.
Իրականացված ներդրումների ազդեցությունը սպասարկման որակի ցուցանիշների վրա

Ընկերության ներդրումային գործունեության արդյունքները գնահատելու նպատակով իրականացվել է նաև սպառողների սպասարկման որակի ցուցանիշների համեմատական վերլուծություն 2018 և 2019 թվականների համար: Մասնավորապես ուսումնասիրվել են ընդհատումների միջին տևողության (SAIDI) և ընդհատումների միջին հաճախականության (քանակի) (SAIFI) ցուցանիշները: Նշված ցուցանիշները բնութագրում են մեկ բաժանորդին բաժին ընկնող անջատումների տևողությունն ու քանակը և համաշխարհային պրակտիկայում օգտագործվում են որպես հուսալիության չափորոշիչներ: Վերլուծության ընթացքում դիտարկվել են միայն այն դեպքերը, երբ ընդհատման պատճառ են հանդիսացել գազամատակարարման ցանցում առաջացած վթարները և փոխադրող ընկերությունը: Կատարված ուսումնասիրության արդյունքներով 2019 թվականի ընթացքում ընդհատումների միջին տևողության ցուցանիշը կազմել է 210,96 րոպե/բաժանորդ, իսկ ընդհատումների միջին հաճախականության (քանակի) ցուցանիշը՝ 0,31 ընդհատում/բաժանորդ: Ըստ մարզերի նկատվում է ընդհատումների միջին տևողության և հաճախականության ցուցանիշի մեծության ինչպես բարելավվումներ այնպես էլ վատթարացումներ:

Մասնավորապես Սյունիքի մարզում ընդհատումների միջին տևողության ցուցանիշը նվազել է 33 անգամ, իսկ Գեղարքունիքի մարզում նույն ցուցանիշը աճել է 16 անգամ: Ընդհատումների միջին հաճախականության ցուցանիշը Սյունիքի մարզում նվազել է 4,5 անգամ, իսկ Գեղարքունիքի մարզում նույն ցուցանիշը աճել է 4,3 անգամ: Նշվածը պայմանավորված է գազամատակարարման ցանցում տեղի ունեցող վթարների կամ ստեղծված վթարային իրավիճակների քանակով:

Ընդհանուր 2019 թվականին Հայաստանի Հանրապետությունում 2018 թվականի համեմատ վերոնշյալ ցուցանիշների էական փոփոխություններ չի արձանագրվել:

ԲԱԺԻՆ 5.
Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

5.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը

2019 թվականի ընթացքում ընկերության կողմից փաստացի ավարտված 3727,2 մլն դրամ ներդրումների ծավալում առկա են ներդրումներ, որոնք ենթակա են նվազեցման ընկերության սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, մասնավորապես.

1. Ավարտված աշխատանքների մասով հաշվետվությամբ ներկայացված 174,4 մլն դրամ ծավալով կապիտալացված աշխատավարձի ուղղությամբ իրականացված ծախսումներից ընդունվել են միայն ուղղակի գործարքային եղանակով վարձատրվող աշխատակիցներին ուղղված 156.8 մլն դրամի աշխատավարձի ուղղությամբ ծախսումները, իսկ 17,7 մլն դրամը նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:
2. Հաշվի առնելով, որ օտարված (վաճառված) և լուծարված հիմնական միջոցներն այլևս չեն մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը, հիմնական միջոցի օտարման (վաճառքի) արժեքը՝ 88,9 մլն դրամ, իսկ լուծարված հիմնական միջոցների դեպքում լուծարման արդյունքում մուտքագրված նյութերի արժեքը՝ 292,7 մլն դրամ, նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:
3. Իրականացվել է նաև հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալի համադրում: Համադրման ընթացքում նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը համեմատվել է փաստացի իրականացված ներդրումների ծավալի հետ՝ վերը նշված նվազեցումների իրականացումից հետո: Արդյունքում, հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է 28,9 մլն դրամով, որից 19,5 մլն դրամն ուղղվել է լրացուցիչ մեմբրանային գազահաշվիչների համալրման համար ճնշման և ջերմաստիճանի էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերմանը և

տեղադրմանը: Հաշվի առնելով, որ ճշտիչները ձեռք են բերվել ելնելով հաշվառման համակարգի արդիականացման, ինչպես նաև ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի №95Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» պահանջների կատարման անհրաժեշտությունից, նշված 19,5 մլն դրամը կներառվի սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում, իսկ 10,2 մլն դրամը կնվազեցվի սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

4. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի №95-Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 9-րդ գլխի՝ նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացնելու համար դիմող անձը սահմանված կարգով վճարում է մատակարարին միացման համար անհրաժեշտ աշխատանքներին համարժեք վճար, որը ձևակերպվում է որպես հետագայում սպառվելիք բնական գազի դիմաց կանխավճար և մարվում է սպառած բնական գազի արժեքից այն նվազեցնելու միջոցով: Հաշվի առնելով Ընկերության ներկայացրած 2019թ. նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգերի գազամատակարարման ցանցին միացման աշխատանքների և մարված գումարների վերաբերյալ տեղեկանքը՝ 0,19 մլն դրամը կներառվի սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում, իսկ 6,8 մլն դրամը նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

5.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Հաշվի առնելով վերլուծության արդյունքները՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2019 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը ամփոփված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2019 թվականի ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների վերաբերյալ

մլն. դրամ

1	**Իրականացված ներդրումներ**	**4 389.9**
2	**Անավարտ աշխատանքներ**	**662.6**
3	**2019 թվականի ընթացքում ավարտված ներդրումների ծավալը**	**3 727.2**
4	**Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում՝**	**416.4**
4.1	Սակագնով փոխհատուցված աշխատանքի վճարման գծով ծախսումներ	17.7
4.2	Օտարված (վաճառված) և լուծարված հիմնական միջոցներ	381.7
4.3	Համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ	10.2
4.4	Նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգերը գազամատակարարման ցանցին միացման աշխատանքներ	6.8
5	**2019 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը**	**3 310.8**

Ամփոփիչ մաս և եզրակացություններ

1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2019 թվականի ներդրումային ծրագիրը կատարվել է 87%-ով: Ներդրումները հիմնականում ուղղվել են գազաբաշխման համակարգին:

2. Գազամատակարարման ցանցին են միացել 11 798 նոր բաժանորդներ և գազամատակարարման ցանցին միացված բաժանորդների ընդհանուր թիվը կազմել է 714 164: Հաշվետու տարում 13 221 բաժանորդների մոտ տեղադրվել են ազդանշանային սարքեր և ինքնաշխատ վթարային կափույրներ:

3. Շահագործման հանձնված հիմնական միջոցներից ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվել են 3 727,2 մլն դրամի ներդրումներ, որից 416,4 մլն դրամի ներդրումներ, ընդհանուրի 11,2%-ը, նվազեցվել են փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից: Հարկ է նշել նաև, որ Ընկերությունը ներկայացրել է Ներդրումային ծրագրով չհամաձայնեցված 120,0 մլն դրամի ներդրումներ, որոնք վերլուծության ընթացքում հաշվի չեն առնվել:

4. 2018 թվականի համեմատ 2019 թվականին ընդհատումների միջին տևողության և ընդհատումների միջին հաճախականության (քանակը) ցուցանիշների էական փոփոխություններ չի արձանագրվել:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1 -	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի №470Լ որոշումը «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին».
Որոշում 2 -	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 14-ի №713Ա որոշումը «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2019-2021 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի №548Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին».
Որոշում 3 –	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №528Ա որոշումը «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2019-2021 թվականի ներդրումային ծրագրի ճշգրտումներին համաձայնություն տալու մասին».
Հաշվետվություն-	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2019 թվականին իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ ընկերության 2020 թվականի մայիսի 8-ի №01-25/1887 գրությամբ ներկայացված հաշվետվությունը.
Տեղեկատվություն -	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի սպառողների սպասարկման որակի ցուցանիշները 2018, 2019 թվականներին http://psrc.am/public/pages/28